




ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Ի Պոլսի արհեստի ճարտ. 10, վեցամ. 5 ֆր: ԿԱՆԻՍԿ: Արտատահման ճարտ. 12, վեցամ. 6 ֆր
Գրութիւնք եւ չին արուիր: Հասցէ DIRAN PAPAŞIAN YELDİZ TABIA, VARNA BULGARİE

ԱԶԳԱՅԻՆ

Խարքերդէ կը գրեն թէ, տեղացի երկու խաթուններ, Սուլթան խաթուն Միննէթեան և Եղիս խաթուն Եէնիգօսլուեան, առաջինը իր ունեցած հարըստութիւնը ամբողջովին Մէզիրէի երկու եկեղեցիներուն ու դպրոցին կտակեր է. երկրորդն ալ իր սեպհական տունը կը տակեր է նոյնպէս եկեղեցիին ու դպրոցին.

Եւրոկիոյ Աղիասանոցը

— Եւրոկիայէն ալ կը գրեն թէ, անցեալ 1899 Յուլիս 1ին Աղբատախնամ հագաբարձութիւն մը կազմուեր է, տեղացի առաջնակարգ ազգայիններէ. Ս. Մինաս եկեղեցւոյ պատկանող տուն մը աղբատանոցի վերածուեր, ուր 30ի մօտ անկեալ աղբատներ կը պատասպարուին, որոնց կը արուի օրական երկու անգամ կերակուր երկերկու տեսակ: Ասկէջ զատ, աղբատախնամը 50—60 չունետոր տու-

նի ամսական 10-25 զրշ. թոշակ կը վճարէ: Պատահական աղբատներն ալ անպակաս են, Կերջանցի, Երզնկացի և Շապին Իարահիտարցի, որոնք ալ իրենց կարգին կընդունին աղբատախնամի օգնութիւնները: Աղբատանոցի հասոյթներն են. շաբաթաբաժին, իւրաքանչիւրը տասը փարս, կան 1—20 շաբաթաբաժին վճարողներ, ընդամենը 160 բաժին, տարեկան 40 ոսկի եկամուտ բերող ազգ. պանդոկը, եկեղեցւոյ պնակներէն ու պատահական նուէրներ, նաեւ զանազան ուտեստներ, զորս կը տանին իրենց հետ տեղացի երկսեռ այցելուներ: Այս հասոյթներէն արտագրուած գումարէն մաս մըն ալ կը յատկացուի Սեբաստիոյ ազգ. որբանոցին, ուր կը խնամուին ու կը դաստիարակուին Եւրոկիոյ շրջակայ գեղջուկ որբերը.

Աղբատանոցի վեցամսեայ վիճակացոյցն է. մոտ 15,167 զրշ. եւ 14,217 և ունեւորը պատրաստ 950 զրշ.

(Կեցցեն Եւրոկիացիք).

Տիար Արամ Ագլարեան 'ի Պոլսէն. — 1898 հոկտեմբերէ մինչև 1899 ապրտ. վերջ «Հայկի»ի մէկ տա- երկան բաժնեդին 12 ֆրանք պարտ- քերնիդ ալ ևս հաճեցէք վճարել.

— Մարտէլէն կը գրեն թէ, տեղւոյն հոգեւոր հովիւ Ս. Սահակ քահանայ իւթիւ-
ճեան, բնիկ Կ. Պոլսոյ Խասգիւղէն, յետ եր-
կար հիւանդութեան, 68 տարեկան հասակին
մէջ փետր. 17ին վախճաներ է: Հանգուց-
եալը օր 35 տարիէ ի վեր կը քահանայա-
գործեր, վերջին 19 տարիները Ֆրանսոյի
մէջ անցուցած է, վայելելով իրեն յանձնուած
հօտին համակրանքը: Հանգուցեալը նախա-
ձեռնարկ եղած է Մարտէլի և Բարիլի մէջ
հայ մատուոններ քանալու: Օծման ու թաղ-
ման տրարողութեան նախագահեր է եւրո-
պայի առաջնորդ Գեր. Իւթիւճեան Սրբազան:

ԾՐԱՐԸ ՍԿՍԱԻ ՔԱԿՈՒԻԼ

Պ... քաղաքէն Միսաք Զաթոյեան ըս-
տորագրութեամբ խմբագրութեանս գըր-
ուած նամակ մը՝ 28 սնտուկ գոյքերու
անհետացմանն առթիւ «Զայն Հայրեն-
եացի» մէջ հրատարակուած Վսարաւորի
ստորագրութեամբ թղթակցութեան մը
իւր մասին գրուած կետերուն դէմ բո-
ղոքելով կը յայտարարէ որ ինքը պատ-
րաստ է իր անմեղութիւնը հաստատել
ընկերային ատենանի մը մէջ:

Նոյն քաղաքէն Առաքել Ն. Ալթըբար-
մագեան անուն անձն ալ «Իրաւունք»-ի
միջոցաւ կը յայտարարէ թէ, պատրաստ
է ժողովրդին վստահութիւնը վայելող
ընկերային ատենանի մը մէջ իր վրայ
եղած ամբաստանութիւնը հերքելու:

Միւսնոյն ատեն ստոյգ աղբիւրէ կը տե-
ղեկանանք թէ ուրիշ ամբաստանեալ
մըն ալ պատրաստ է ելեր ընկերային
ատենանի մէջ ցոյց տալ այն առաջնա-
կարգ խաչագողները, որոնց ձեռքը ին-
քը գործիք եղած է ելեր:

ՀԵՈՐՀԱԿԱՆԻՔ

Ի յիշատակ նորոգ հանգուցեալ Աւետիս
էֆ. Պարոնեանի հոգւոյն, Ազնուհի ալրի
տիկին Թէնսուֆ Ա. Պարոնեան, Վառնայի

«Աղջկանց կրթարանի» նուիրեց հարկը
Ֆրանսիայ:

Կրթարանիս տնօրէնութիւնը ի դիմաց աղ-
բատ ուսանողուհեաց, կը փութայ հրապարա-
կաւ իւր շնորհակալութիւնն յայտնել առ
Ազն. նուիրատու տիկինն:

Յարգանք

Պ. ԺԵՐԺԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԻԵՆԱՆ

Պուրկազ, 3 Մարտ 1900

«Իրաւունք» լրագրոյ փետր. 26ի թը-
ւոյն մէջ յօդուած մը կարգացինք «Պուրկա-
զի ազգային վիճակը» խորագրով: Արդարեւ
շատ ուրախ պիտի ըլլայինք եթէ յօդու-
ածագիր Պ. Յոլակ քիչ մը շողորթութեամբ տեղ
ամեն բան իր իսկութեանը մէջ նկարագրած
ըլլար, ինչ որ անկողմնակալ կոչուելու յօդ-
ուածագրի մը աւագ պարտականութիւնն է:
Ուրեմն Պ. Յոլակի գրել չուղած հետեւեալ
իրողութիւնը մենք կը ներկայացնենք ընթեր-
ցողաց:

1896 թուականին քաղաքիս մէջ տիկին-
ներէ կազմուած էր «Օգնասէր Հայուհեաց»
անուն ընկերութիւն մը, որ տարուան մը մեղ-
ուածքան աշխատութեամբ յաջողեցաւ 40 ոս-
կի հաւաքել թէ՛ վիճակահանութեամբ և թէ
հանգանակութեամբ: Սոյն գումարը այն ա-
տեն յանձնուեցաւ Պուրկազական գրամատու-
նը, ուր մինչև ցարդ կը մնար:

Վերջին օրերս տեղւոյս Թաղ. Խորհուր-
դը՝ առանց իմաց տալու ընկերութեան ան-
գամուհիներուն, գրամատուն կը դիմէ ու կը
յաջողի նոյն 40 ոսկի գումարը առնել, թա-
ղային անուակի նեղ վիճակը պատճառ բըռ-
նելով: Ընկերութիւնը՝ որ թէև մէկ քանի ըն-
կերուհեաց անկարողութեանը պատճառաւ
առժամեայ դադար մը ունէր, բայց իւր հիմ-
նագիր անգամուհիք կը բողբոն Թաղ. Խոր-
հրդոյ սոյն տնօրէնութեան դէմ ու գրամը
ետ կը պահանջեն նորէն պանդային յանձ-

նելու համար, որովհետեւ, ըստ կանոնագրի «այն ասեւն միայն պիտի գանձուի պանգայէն դրամը, երբ Պուրկազի Ազգ. վարժարանի շինութեան հիմնադրոյ դրութիւն»:

Թաղ. Խորհրդոյ Պ. Ատենապետը կը մերժէ անկանց այս արդարացի պահանջը, ուրոնք յուսահատ կը վերադառնան:

Ահա իրողութիւնը իր պարզութեամբը ժողովուրդի արդար դատաստանին յանձնելով, կը հարցնենք նաեւ Պ. Յոլակին թէ ինչո՞ւ սոյն խնդիրը որ ինքը լաւ գիտէր, չի գրեց իր «Պուրկազի ազգային վիճակը» վերնագրով մեծագործ յօդուածին մէջ:

Թերեւս այն միջոցին յիշեց սա առածը. «Խաթեր համար հում հաւը կ'ուտուի»:

ԱՆԿԱՆՏՏԵՍ

ԿՍՄԻՏ

ՆՈՒՍԻԱԼԸ ՍԻՐԱՀԱՐ ԹԲ

Երիտասարդ պարոն մը վերջերս տեղէ մը ձեռք կը ձգէ երկու գեղանի բայց անձանօթ նաւթօգնեցողութեան մէկտեղ ելած լուսանկարը և անոնց... կը սիրահարի, այնպէս որ, երկու վայրկեանը անգամ մը լուսանկարը գրպանէն կը հանէր, սրտին վրայ կը սեղմէր, հետեւին իջ խօսէր ու երբեմն շրթունքին ալ կը մօտեցնէր: Ինչո՞ւ ողորմելին այնչափ յափշտակուած էր անոնցմով որ շատ անգամ բարեկամներու ներկայութեանն իսկ լուսանկարը գրպանէն կը հանէր, կը շօյնէր, կը հոտուրտար, խնդար ու կը հառաչէր: Անցած իրիկուն գարձեալ էր մտերիմներէն մէկուն տունը այցելութեան երթալով երբ լուսանկարը գրպանէն կը հանէ, ներկայ բնական հետաքրքրութեամբ զայն ձեռքէ ձեռք կը պտտցունեն, այն միջոցին, ինչպէս կը լալ, լուսանկարը չարաճճի տղու մը ձեռքը կանցնի, ուրիշ էտ առնել ուղած ատեննին՝ տղան կը բարկանայ ու անմիջապէս կը պատուտէ զայն:

Երիտասարդ սիրահարեալը կայծակահար կը լլայ, գլուխը ծեծելով կ'սկսի լալ, կոծել ու «Ձայն հառաչանաց հե-

ծութեան սրտի» ըսելով անկիւն մը կը քաշուի, ուր չի կրնար տակայն հա՛դարտ նստիլ:

Տնեցիք կը ջանան չինքը համոզել կամ միտիթարիլ, բայց ի՞նչո՞ւ, նա լալագին ձայնով կը պատասխանէ.

— Պարապ տեղը մի՛ աշխատիք չիս համոզել. իմ այս կորուստն անդարմանելի է. անոր իմ սրտիս վրայ ազդածը աննկարագրելի է. ո՛հ, դե՛ղ մը, ճար մը ըրէք ինձ, առանց այդ լուսանկարին անկարելի է որ ապրիմ:

Այս ըսելէ ետքը լուսանկարին կտորւանքը խենդի պէս դետնէն կը ժողուէ, զոր հոտուրտալով կը շարունակէ իր լացն ու կոծը, կատաղի ականարկներ ուղղելով չարաճճի պղտիկին, որ յաղթական, մայրիկին թեին տակը ապաստանած լեզու կը յուցնէր միտիւին:

Աւ մինչդեռ տնեցիք շուրաժ ինչ ընելնին չեն գիտնար, ահա անկիւնէն տան խաթունը կը միջամտէ ու կ'ըսէ.

— Ինծի նայեցէ՛ք, ատոր դեղու ճար մը կ'ուզէք ընել նէ՛ թուղթին կտորնէրը հաւնայի՞ ճուսխա մը ըրէք ճիտէն վար կախեցէ՛ք քի սիրտը ըռահաթնայ:

— Ճանըմ մամիկ, հիշ ատանկ բան կըլլա՞ր:

— Ինչո՞ւ չըլլար. դուք ըրէ՛ք տէ նայեցէ՛ք ինտոր ծանը կը կտրէ:

— Նուսխա չէ՛ պօխճա պիլէ կախենք նէ ֆայտա չունի:

— Գաճանըմ, մէյրը ըրէք կըսեմ կոր:

— Է հայտէ ընենք, ըսելով նուսխան կը շինեն ու քահքահներու ձայնով միտիւին ճիտէն կը կախեն, որ կը սկսի «Գիշեր ցորեկ կը հառաչեմ այս օրիորդ քո սիրոյդը երգել. ներկայք ալ կամաց ձայնով «Աստուած շատ քաշել չի տայ» մաղթել:

Կըսեն թէ մինչև այսօր միտիւին վերան է նուսխան, զոր ճանքան գացած ատենն անգամ դուրս կը հանէ, կը հոտուրտայ հետը կը խօսի, կը համբուրէ ու գարձեալ կը պահէ:

Արդեօք տաքերը կոխեն նէ ինչ պիտի ընէ:

ՖԻԻԻԻ

ՀԵՏԱՔՐԲՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Բոլշակոյի աշխարհի մէջ քանի՞ քերկը սպառի. — Բարիդի մէջ պարբերաբար հրատարակուող «Լա կուանտ Ենտրքաբէտի»-ին 663րդ պրակէն կը տեղեկանանք թէ հիմա բոփանդակ աշխարհի մէջ հրատարակուող լրագիրներուն թիւն է 70,000: Մինակ որս թերթերու տպողութեան սրտան միջին ըստ պատուին է 40,000,000: Ըմենէն շատ թերթ տնեցող երկիրն է Ամերիկա, 20,630 թերթ, ու ամենէն քիչը Յունաստան, 53 թերթ:

ԱՆՈՒՆՔԱՆԱՐ

Ս. Բեդերսպուրկի հասցէներու վերա-
տեսուէր հետեւեալ գիտողութիւնն ըրած է.
Բեդերսպուրկի մէջ 64 հազար հոգի-
ներ կը բնակին որոնք ի վաւիճակ կ'անուան-
ուին, որոնց 35 հազարը այր և 29 հազարը կին.
ստոնցմէ 3 հազարը կ'անուանուին ի վաւիճակ
ի վաւիճակ ի վաւիճակ 35 հազար անձինք կ'ան-
ուանուին Վասիլիեմ որոնց 20 հազարը այր:
29 հազար Փէրոմ, որոնց 17 հազարը այր:
22 հազար Միխայել, որոնց 13 հազարը այր:
26 հազար Թեոսորոմ, որոնց 13 հազարը այր:
15 հազար Իւրիւմ, որոնց 11 հազարը այր:
17 հազար Եմիլիոմ, որոնց 10 հազարը այր:
18 հազար Անտրէմ, որոնց 10 հազարը այր:
15 հազար Ստեփանոմ, որոնց 10 հազարը այր:

Դարձեալ տասը հազարներով կը հաշ-
ուին Արիստիճիւրը, Կրէկիոմները, Բալ-
լիոմները, Պոլիստիոմները, եւ այլն: Ամբողջ
Բեդերսպուրկի մէջ միայն մէկ հոգի կար Պրի-
ֆալիմ անունով որ իւր համանունը չունէր
և այն ալ մայրաքաղաքէն մեկնեցաւ:

Քրիստոսի գալով, որչափ շատ կը հան-
դպինք Տիւրան, Տիւրան, Մարթէն և այլն ու-
նուններուն:

Տանիմարքայի մէջ Փէթրոսն անունը
այնքան շատ տարածուած է որ Քօթէնհակի
մէջ ստիպուած են նոյն իսկ տան յարկն ալ
նշանակել հասցէներու վրայ, վասնզի յա-
ճախ միեւնոյն տան մէջ նոյն անունը կրող շատ
հինգ հոգիներ կը գտնուին:

Ծ Ի Ծ Ա Ղ

“ԱՌԱՆՑ ՍԱՏԱՆԻ
ԱԾԽԱՐՅ ԶԻ ԴԱՌՆԱՐ”

(Ժողովրդական պատմութիւն)

Եւրոպայի

«Հնուց մնացած հեթանոսի մը նա-
յնով, Քրիստոսի հեծած իշուն ոտքե-
րէն մէկ պայտը ճամբան ինկած էր,
Ուստի կուգան պայտաւ Դազար աղբա-
րը տանիլ որ պայտ է, ու ասիկա ի պա-
տիւ Մեծ Վարդապետին, պայտերուն
մէջէն արծաթ պայտ մը կը փնտռէ, կը
գտնէ ու կը զարնէ ատուածաբարձ եր-
ջանիկ անասունին ոտքը:

Յիսուսի հաճելի կը թուի այս ար-
հեստաւորին ըրած զոհողութիւնը, և կը
հրաւայէ բաղձանքը յայտնել: Քովինե-
րը, մանաւանդ Պետրոս Առաքեալ, կը
յորդորեն, կը մշտեն որ երկնից Արքա-
յութիւնը ուզէ: — «Թէհէ, Արքայու-
թիւնը ինչ տի ընեմ, կըսէ Դազար, ես
կը փափաքիմ որ խանութիւն մէջ ունե-
ցած աթոռիս վրայ ո՞վ որ նստի, չի կըր-
նայ ելլել առանց իմ հրամանիս, ասի-
կա մէկ. երկրորդ՝ ընկուզենիս վրայ
ո՞վ որ նստի, ալ չի կրնայ իջնել, հոն փակ-
չի իմ կամքովս, և երրորդ՝ խանութիւն
իշուն տոպրակին մէջ մտնողը ալ չի
կրնայ դուրս ելլել:

Դազարի այս ուղածները կը շնորհ-
ուի իրեն:

Ճարինքն անցած են, Դազար աղ-
բարը ալ ծերացած, ժամանակը լրա-
ցած է. դժոխքէն սատանա մը կուգայ
զինքը հրաւիրելու, — քանի որ Արքա-
յութիւնը նախապէս մերժած էր—

— Դատ ալէկ, կըսէ Դազար աղբար,
քիչ մը նստէ սա աթոռին վրայ, մինչ-
եւ որ դորժս աւարտեմ ու նրթանք:

Բայց հրաւիրակը, հակառակ սա-
տանա մը ըլլալուն, Դազարին հրամա-
նովը աթոռին վրայ կը փակչի կը մնայ:

Օրեր կանցնին, քանի մը սատանա
մէկէն կուգան հասկնալու համար թէ ո՞ր

Մնաց Ղազար աղբարը, մանաւանդ անոր մօտ զրկած ընկերներն:

— Շատ լաւ, կըսէ անոնց ալ Ղազար աղբար, պիտի երթամ արդէն, միայն թէ սա ընկուզենիէն քիչ մը ընկոյզ վար առէք որ ուտենք ու անանկ երթանք, ես չեմ կրնար ծառը ելլել, ալ ծերացեր եմ:

Աւելորդ չէ՞ ըսել թէ անոնք ալ հոն կը փոկչին ու կը ճուան:

Վերջապէս, դժոխքին մէջ կասկածը կաւելնայ, և աւագ սատանայի մը առաջնորդութեամբ սատանաներու ամբողջ լէգէոնը կուգայ Ղազար աղբար ետեւէն: Այլ ճար չի կայ, պիտի երթայ, բայց բան մը գինքը շատ զարմացուցած է. սատանաներու համար կ'ըսուի թէ հազարը մէկ պղտիկ ծակի մէջ կըրնան սեղմուիլ, ինտո՞ր կըլլայ ատիկա, հաւատալը չի դար, եթէ կը հաճին, ու եթէ երբեք չափազանցութիւն չէ այս վերագրուած ճարպիկութիւնը, փորձով թող համոզեն զինքը, շատ չէ, ուստի րակին մէջ թող սեղմուին որ տեսնէ:

Հպարտ, սնապարծ սատանաները իրենց ճարպիկութիւնը ցոյց տալու առիթը ձեռքէ չփախցունելու համար ինքնավստահութեամբ կը լեցուին իշուն տոպրակին մէջ, բայց ծուղակին մէջ բռնուեցան, ու Ղազար աղբար ամեն օր, օրը երեք անգամ ձեռքի մուրճով կը ծեծէ այդ այդ չարաճճիները որոնք կը ճուան ու կը վզրտան:

Բայց եկու տես որ տռուտուրը կը խափանի, գործերը կը դադրին, խանութպանները անօթի կը մնան, դատարանները կը գոցուին ու քաղաքը միապաղաղ լճի մը մակերևոյթին նման մեռելաչան անշարժութիւն կը տիրէ, վասն զի սատանաներու բանտարկութեամբ սատանի հնարքը, խաբէութիւնն ու ոճիրները վերցած են աշխարհէս: Վերջապէս այս տաղնապալի կ'ացութեան պատճառը կը փնտռեն ու կը յաջողին գտնել գաղտնիքը: Կը թախանձեն Ղազար աղբարը, արձակելու համար կայանաւոր սատանաները, որովհետեւ «Առանց սատանի աշխարհ չի գաւառար»:

Ղազար աղբար խօսք առնելով որ զինքը Արքայութիւն պիտի զրկեն, ար-

գելքը կը վերցնէ, սատանաները կը թողու, որոնք շունչերնին մինչև դժոխք մէկ կ'առնեն հեւի հեւ: Ասով աշխարհի գործերը դարձեալ իրենց ճամբան դառնալով կը շարունակեն ու պիտի շարունակեն մինչև յաւիտեան:

Գ. Տ.

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

ՍԱՄԱԹԻԱՅԻ ՇԻՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Գնանէն քսանհինգ տալու, բաց կարմիր ֆէս, ոլորուն պեխեր, շաքաթը անգամ մը կ'ածիլուի:

Վաճառականի թէզկեախստ, ոսկերիչ եւ կամ մաքսէն ապրանք կը հանէ:

Կիրակիէ կիրակի Բըթի-շան կ'երթայ եւ գիշերը Բերա կ'անցընէ:

Տարին յիսուն երկու օր ունի իրեն համար... կիրակիները:

Մնացեալ օրերը մեքենայ մըն է որ ուտուն կ'անուխ տունէն դուրս կ'ելլէ, մինչեւ իրիկուն եզան պէս կ'աշխատի եւ իրիկունը երկու գաւաթ դարեջուր կամ չի մը օղի կը կոնծէ թաղին զօսարանին մէջ և տուն կ'երթայ, մանի մը կը կանչէ, մօրը հետ կը կուռի եւ կանուխկէկ կը մտնէ անկողին:

Թաղին մէջ անպատճառ ֆօթք մը ունի, հեզ պարկեշտ աղջիկ մը, որուն հետ սիրահարութիւնը կը կայտնայ տունին առջևէն անցնիլ, պատուհանէն վերակնարկ մը նետել եւ շատ մը նամակներ գրել... զորս երբեք չի զրկեր:

Հոտեղէն կը գործածէ և ամէնէն անտանելիները. քաջուրի, ֆօրիջօքսի, միւսք եւ մազերուն համար լաւանտա, զոր կը գնէ Մահմուտ Փաշայի Պարսիկներէն, սրուակը 5 զրուշի:

Կիրակի օրերը պատրաստ սիկառէթ կը գործածէ եւ բանի օրերը 40նոց թիւթիկ:

Ննջասենեակին մէջ պոռո մը ունի, որուն բանալիները երկիւղած օրէն քովը կը պահէ:

Պուռային մէջ կան. երեք հատ շապիկ և չորս հատ օձիք, ամէնքն ալ տարբեր

ձեռով . երեք հատ փաղկապ որոնց երկու-
քն թէրմաշ և միւսը Բիկմալիեռնէն գնած
է երկու տարի առաջ մէծիտիյէյի մը եւ
զոր տարին հազիւ 5-6 անգամ կը գոր-
ծածէ . երկու ձեռք հաղուստ Վարդան-
եանի քով շինուած , մէկը ամառուան
եւ միւսը ձմեռուան , բարտիսիւ մը ,
զոյգ մը Քիջ Տէգօս գուլպա . . . Բերա-
ւերթալու համար .

Ամէն օրուան հաղուստը ու թըտարին
անգամ մը կը փոխէ .

Ունի նաեւ պեխի քանար մը , ծոցի
փոքր հայելի մը , քանի մը աղջիկան պատ-
կերներ զորս , չի ճանչնար . մետաքսէ
թաշկինակ մը , կապարմիր , սիկարէթի
տուփ մը , Պարոնեանի Զոջևրջ , զոյգ մը
ձեռնոց , ժամացոյցի կեղծ չղթայ մը ,
կազնի տետրակ մը , Արեւելիայի թիւը
որուն մէջ Սամաթիայի թաղականներուն
գէմ յօդուած մը կայ . աղջիկան մազի
տրձակ մը , «Վերժին» անուն ոտանաւո-
րի մը ձեռագիր մէկ օրինակը , զոյգ մը
կիրակնօրեայ սկաքրին :

Այդ պահուն իր վիզէն է , ամբողջ
ինքնութիւնը , կեանքը և գոյութիւնը .

Կիրակի կէս օրին մօտ գիւմայ կ'անցնի .
Այնալըն կը ճաշէ եւ յետոյ մինչեւ թագ-
ախ կը քալէ , Բըթի . Շանկը վերագառ-
նայ եւ կամ Պօմօնթին կը հանդպի .

Իրիկունը մէզէսով փորը կը կշտացնէ
եւ անկից կ'երթայ Բօնքօրտիա .

Փրանսերէն չգիտնալուն կ'ուզէ մա-
քուր տաճկերէն խօսիլ . Մեծ բան է եթէ
Բօնքօրտիայի մէջ կուլ մը չի հանէ եւ
անկից կ'երթայ բարկութիւնը անցընել
չես գիտեր ուր :

Բարի տղայ , որ նկարագիր չունի , չի
զգար , եւ կ'ապրի ինչպէս կ'ապրին բոյ-
սերը արեւին հսկողութեան ներքեւ :

Ամբողջ խտէալն է երեք հարիւր ոս-
կինոց աղջիկ մը գտնել :

Զինուորական կանոնաւորութեամբ քա-
տրել կը խաղայ եւ գործի օրերը թաշ-
կինակ չղործածեր .

ՄԵՐ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

Ըմերիկա , Ուոդր . Տիար Ա . Ռ . — Երամը
կրնաք զրկել «Պանգ Նասիօնալ Պուլիար Վառ-
նադի վրայ քաշուած մեր հասցէին ուղեալ
«Ըմերիկան Էքսպրէս է գըմքէնիի փոխա-
նակագրով :

Տ . Մ . Պ . կալաց . — Մեր պայմանը անանկ
է . թուղթի փոխարէժը կանխիկ , ապագրու-
թեանը կանխիկ , բուլինը կանխիկ , բաժնեգի-
նը ինչու ըլլայ ապառիկ :

ՆԿԱՐ ՀԱՆՈՒԿ

Թույն



կաօ



նախան Յ տ



Սեռալին անսխալ կարգացողին նուէրն է
կատակերգութիւն մը :

Թիւ 152 «Հայերիի Նկարհանուկը կար-
գալ ալպէս :

«Սրտին մօտիկ եղող դրացին ազգականէ
շատ աղէկ էր :

զոր անսխալ կարգացին , Օր . Սօֆի Խ . Տա-
մատեան . Պ . Յ Բարսամեան . Վիկթօրիա Զը-
պուրճեան . Յ . Էնկիպարեան . Ռ . Գարուպա-
ճաքեան . Բերկրուհի Մինէճեան . Գ . Մ . Ա-
րապեան . Գ . Պօղոսեան . Մ . Թաշճեան . Կ . Պ .
Փափագեան և Յ . Մաղմանեան Վառնայէն :
Յ . Մ . Պայաճեան և Յ . Ժամակուհեան Շուժ-
լայէն : Կ . Յ . Մինասեան Օսման բաղարէն : Օր .
Աննիկ Պէրպէրեան Սօֆիայէն : Մ . Բէհլիվան-
եան . Գեղեցիկ Գըլըճեան և Վ . Գիլիշեան
Փ . Պըլսէն Տ . Ն . Զ . Ռ . Գ . Մեղիքսեղեան . Գ .
Գալէնտէրեան Ն . Տղրամաճեան և Մ . Գնու-
նի Ռուսմուղէն :

ՅԱՂԱԿՐԱՏԸ

ՉՈՒԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԱԾԻՔ

Մաքսնե նահանգին պղտիկ քաղաքներէն մէկուն՝ քիւնիի մէջ, ասկէ չորս տարի առաջ կը բնակէր բարի ծերուկ մը, հայր Լաբալիւ անուն: Ամեն առտու, մութնուլուսուն դործիքները կը շալկէր ու կ'երթար իր այգին մշակելու: Հայր Լաբալիւ վաթսուոն տարեկան մը կ'ար թէւ, բայց չէր կրցած հարստանալ: Եւ սակայն կը մխիթարէր ինքզինքը, որովհետեւ բիշ մը փիլիսոփայ մարդ էր: Գետոյ ոչ մէկուն կը զգացներ թէ այդ պարագան կրնայ իրեն վիշտ պատճառել: Մանաւանդ աւելն մարդ անանկ գիտէր թէ հայր Լաբալիւ շատ լաւ կ'ապրի և թէ զոհ է իր վիճակէն: Ուրիշներու ինչքին ալ աչք չէր տնկեր բնաւ. պարզուկ, համեստ մարդ մըն էր արգէն ու քիչով կը գոհանար: Քաղքին բոլոր այն մարդիկը՝ որոնք ծերուկ այգեգործը կը ճանչնային, կըսէին իրեն համար.

— Ինչ բարի մարդ է սա հայր Լաբալիւն. որ մը օրանց չէ՝ պատահած իր վիճակէն ու բնաւ չէ՝ պատահած առիթ մը ուր գէշ խօսի իր գրացիներուն վրայ: Իր միակ հոգը խաղոխներն են. թող բերքը լաւ ու առատ ըլլայ, և հայր Լաբալիւ կրնայ քիւնիի ամենէն երջանիկ մարդը համարուիլ: Եւ սակայն կան շատ մարդիկ որոնք դուրսէն հայր Լաբալիւի նման երջանիկ կ'երևան, թէ և ներսէն անանկ չեն: Ու մեր ծերուկ այգեգործն ալ երջանիկ չէր: Խնդիրը հոն էր որ իր վիշտը, իր ցաւը իրեն կը պահէր ու մարդու բան չէր յայտնէր անոր մասին: Եւ ասիկա բաւական տուեանէ ի վեր կը տեսէր այդպէս. այն ատենէն ի վեր՝ ուր ինքն ալ ամեն մարդու պէս ամուսնացեր էր: Իր կինը միակ պատճառն էր իր վիշտին, անտարակոյտ, ասանց ուղեւ, կինը թունաւորած էր խեղճ այգեգործին կեանքը: Եւ սակայն չար կին մը չէր ան, ոչ ալ ծոյլ մը և շոտլ մը...: Ընտանեկան սքանչելի յատկութիւններ ունէր. բայց աւագ, գէշ ու նախութիւն մըն ալ ունէր՝ զոր այգեգործը սորսափելի կը նկատէր:

Աինը շատախօս էր:

Խեղճ մարդը ինչե՞ր ըրեր էր անոր լեզուն կարճեցնելու համար. որ մէկը թուել հոս: Դի-

տողութիւն, աղաչանք, սպտոնալիք, վերջապէս ամէն բան անօգուտ եղած էր: Անոջ շաղակրատութիւնը փոխանակ մեղմուելու, երթալով ալ աւելի սաստիկ թափ մը կը ստանար:

— Աինս կ'ըսէր յաճախ, նոյն իսկ կրնայ երկու պատեր իրարու հետ կռուի գրգռել:

Խեղճ մարդը իրապէս կը տանջուէր կնոջը այդ գէշ ունակութեան երեսէն: Առտու մը այգեգործը բարկացած էր, — ինչ որ յաճախ կը պատահէր, — և ճիշդ կինը յանդիմանելու վրայ էր՝ անմիջապէս ետքը դէպի այգի ձամբայ ելլելու համար, երբ դուռը բացուեցաւ ու վիճաբանութեան մէջ ձայն մը լսուեցաւ որ կըսէր. «Բան մը գնեցէք այսօր իմ բարի տիկինս...: Սանտրեր ունիմ, դերձան, ասեղ ու նոր օրացոյցներ»:

Երջուն փերեղակ մըն էր:

Հայր Լաբալիւ անոր դարձաւ ու խիստ ձայնով մը ըսաւ. — Բանի մը պէտք չունինք:

Փերեղակը պնդեց. — Տանդէլներ, աճառիկ մը, ասեղ, դերձան...

Եւ որովհետեւ ասիկա ըսած ատենը կը խընդար, հայր Լաբալիւ անանկ կարծեց թէ մարդը իր վրայ կը ծիծաղի: Եւ ալ աւելի բարկացաւ. — Անպիտան փերեղակ, պռուց, դուրս ելիր հոսկէ, ապա թէ ոչ...

Ու երկու ձեռքովը բրիչը բռնեց:

Փերեղակը կրցածին չափ շուտ փախաւ. բայց դրան սեմը անցած պահուն անգամ մըն ալ ետին դարձաւ ու նորէն ըսաւ խեղալով.

— Տանդէլներ, աղւոր աճառ մը...

Հայր Լաբալիւ դուռը գոցեց անոր երեսին ու վայրկեան մը ետքը ինքն ալ դէպի այգին ձամբայ ելաւ: Յորեկուսն գէմ՝ ըստ սովորութեան տուն եկաւ կնոջը հետ ճաշելու: Սակայն կինը հաղիւ թէ ճանչցաւ զայն. այն ատեն ճան ալակերպած էր դէմքը և այնչափ խոր վիշտի մը մէջ թողուած կ'երևար: Անհանգստութիւն մը զգաց կինը, վախցաւ, և հարցուց թէ ինչ ունի, ինչ պատահած էր:

Հայր Լաբալիւ երթալով ալ աւելի կը խըռովէր, բայց բնաւ բան չըսաւ: Սեղանին վրա լուսը անցաւ: Աինը կերակուրը բերաւ: Բայց հայր Լաբալիւ որ երբեմն այնչափ ատրոժանքով կ'ուտէր, ձեռք չդպցուց կերակուրներուն:

Ան ատեն կինը նորէն հարցափորձեց զայն:

— Ոչ, ոչ, պատասխանեց ծերուկը, մի՛ հարցափորձեր զիս. բան մը չպիտի ըսեմ քեզի: Ու արմուկները սեղանին կրթնցուցած, գլուխը ձեռքերուն մէջ սկսաւ հեծեծանքներ արձակել:

Խեղճ կինը չէր գիտեր թէ ինչ ընէ. մանա-

ւանդ որ կ'ուզէր այդչափ մեծ վիշտի մը պատճառը հասկնալ: Ամուսինին ոտքը ինկաւ ու ինդրեց որ ամեն բան յայտնէ իրեն:

— Ա՛հ, աղաղակեց հայր Լաբալիւ ցաւագին ձայնով մը, այս բռնը պիտի մեռնէ դիւ. բայց ինչպէ՞ս բեզի կրնամ յայտնել զայն. անմիջապէս կերթաս դրացներուն կը պատմես:

— Ոչ մարդս, ոչ, ոչ. կը խոստանամ չըսել:

— Կը խոստանաս բայց չես կրնար լեզուդ կարծ լռել: Ու ասանկով պատճառ պիտի լլլաս որ զիս թիարան դրկեն:

— Թիարա՞ն . . . , Աստուած իմ. . . ա՛հ, ի՞նչ ըրիր ուրեմն, չըսե՞ս . . . :

— Կը խոստանաս որ չաղակրատութիւն չի պիտի ընես:

— Երբու՞մ կրնեմ, մարդ, երբու՞մ որ մարդու բան չպիտի ըսեմ:

— Շատ լուռ, հիմա պիտի խոստովանիմ բեզի: Այգիին մէջ կաշխատէի, երբ փերեղակը, գիտե՞ս փերեղակը . . .

— Այո՛, այո՛:

— Ճիշդ իմ դէմս կեցաւ ու սկսաւ. հետս իշնալ: Շատ գէշ տրամադրութեան մէջ էի, և այնչափ ալ բարկացած որ բրիչս տանելուս պէս դարձաւ: Հարուած մը տուի գլխուն: Կը հասկնաս, սպաննեցի զինքը . . .

— Ի՞նչ, սպաննեցիր զայն. Աստուած իմ, ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը. կորսուած ենք:

— Ոչ, ապահովուէ, երկուքս մինակ էինք, մէկը չտեսաւ. բայց զոն ամուր բռնէ լիզուդ, չեղլեւ մարդու բան ըսես:

— Բայց սպաննելէ ետքը ի՞նչ ըրիր զայն.

— Այգիին մէջ ծակ մը բացի և հոն թաղեցի: Կը կրկնեմ որ մարդ չտեսաւ. միայն թէ լաւ ուշադրութիւն ըրէ. եթէ երբէք ափեմ մեկուն յայտնելու ըլլաս, զիս անմիջապէս թիարան կը տանին:

Այն օրը հայր Լաբալիւ իր այսին չվերադարձաւ: Երկի կնիկ օրուան մնացորդը լացով ու կոծով անցուցին:

Յաջորդ օրը այգեգործը կանուխ արթնցաւ: Քիչ մը աւելի հանդարտ կերեւար. Շատ չկեցաւ տունը, և իսկոյն իր այգին մեկնեցաւ. նախապէս կրկին և կրկին անգամ կնոջը պատուիրելով որ մարդու բան չըսէ:

ԷՄԻԼ ՌԻՇԴՊԻԵ

(Շարունակելի)

Ս. 2.

ՀՈՎԱՍՏՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հատորիկ մըն է, ընթերցանութեան արժանի: Գինն է 25 սանդիւմ. շատ առնողներու համար չափաւոր զեղչ: Գիտե՞ք Զարպէտնէլեան գրատուն վառնա:



Հայկական սրճարան ճաշարան, ընթերցարան, պիլարտո, կրկնակ եւ ընտիր սիկարներ: Հաստատութիւնս բաց է ամեն օր առւօտեան ժամը 8էն մինչև 2: Երրորդ Ամբիւթիւ 388, 28րդ դոփոցին մօտիկ ի Նիւ—Եօրք:

ՆՈՐ

Ա. Զ. Մ. Ա. Տ. Ո. Ի. Ն.

Կ. Ա. Զ. Ա. Ի. Ո. Ռ. Ե. Ա. Ն. Ի.



Սագալը չէշմէ, աղջկանց կիսանազիւի գէմը, վարնա:

Թիւղղո՞ծ, կտշեկաղմ, լաթակաղմ և թղթակաղմ՝ եւրոպական ճաշակաւ: Գլխաւաւաւաւ զիներ: Կը պատրաստէ Նաւ վաճառականական տոմարներ եւ գալտցական տետրակներ:

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԵՆԱՎԵԱՆ

«Գայլ վահան» տրերգութեան հանգումը հեղինակին սոյն բ. երկն ալ կը յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը: Գինն է 1 ֆրանք: Գիտե՞ք Սոսմա՞ն Մանափեմը, բոսթրէսթեմը, վարնա:

Отговорникъ М. СКОЛОВЪ
Печница „Взаимность“ — Варна